Կարդա՛ տեքստը և կատարի՛ր առաջադրանքը։

Կատվազգիների ընտանիքին պատկանող այս կենդանին ամենախոշոր գիշատիչներից է: Վագրի մարմնի երկարությունը հասնում է մինչև երեք մետրի, իսկ կշիռը մոտ երեք հարյուր կիլոգրամ է

Վագրն ապրում է լեռնային անտառներում: Հրաշալի որսորդ է։ Վազում է արագ և կարող է երկար հետապնդել որսին: Սակայն այդպես ավելի քիչ է պատահում։ Խորամանակ գիշատիչը մեծ մասամբ հարձակվում է թաքստոցից. շերտավոր գունավորման շնորհիվ թաքնվում է թփերի մեջ և նույնիսկ մոտիկից չի նկատվում: Բացի այդ՝ որսում է հիմնականում հիվանդ ու թույլ կենդանիներ։
Վագրը որսին հետապնդելիս երկար լողում է, սակայն սիրում է նաև հենց այնպես լողալ։

Վագրի հզոր ժանիքներ ունի, բայց անգամ թաթի մի հարվածով կարող է որսին սպանել։

Նրա ցատկերը հասնում են հինգ մետրի։

Վագրը հարձակվում է եղջերուների, վարազների, լեռնային այծերի, իսկ հնարավորության դեպքում՝ նաև ընտանի կենդանիների վրա: Եթե որս չի գտնվում, քաղցած վագրը սնվում է գորտերով, մկներով, նույնիսկ մորեխներով: Բայց կարող է նաև երկար ժամանակ դիմանալ առանց սննդի:

Մարդու վրա վագրը հարձակվում է, երբ վերջինս փորձում է բռնել կամ սպանել նրա ձագին, վիրավորում է գազանին կամ էլ խանգարում որսն ուտելուն:

Վագրը ունենում է երկուսից չորս ձագ: Ապրում է քսան և ավելի տարի:

Այժմ վագրերի թիվը խիստ կրճատվել է: Նրանք գրանցված են Բնության պահպանության միջազգային միության Կարմիր գրքում:

Առաջադրանքներ

1. Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը: Վագրն ապրում է.

- լեռներում,
- անտառներում,
- անապատներում,
- **լեռնային անտառներում**

2. Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը: Վագրը կշռում է.

- 500 կգ,
- 1 տոննա,

- 250 կգ,
- **300 կգ:**

3. Ընդգծի՛ր սխալ պատասխանը: Վագրը որս անելիս.

- թաքնվում է թփերի մեջ և գաղտագողի է հարձակվում,
- **չի թաքնվում և գաղտագողի չի հարձակվում:**

4. Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը:

- Վագրերը ջրից վախենում են և երբեք ջուրը չեն մտնում:
- Վագրերը ջրային կենդանիներ են և ապրում են ջրում:
- **Վագրը որսին հետապնդելիս երկար լողում է, սակայն սիրում է նաև հենց այնպես լողալ:**
- Վագրերը լողալ չեն սիրում և ջուրը մտնում են միայն որսին հետապնդելիս:

5. Տեքստից դո՛ւրս գրիր այն հատվածը, որտեղ գրված է, թե ինչով է սնվում վագրը, երբ որս չի գտնում:

Եթե որս չի գտնվում, քաղցած վագրը սնվում է գորտերով, մկներով, նույնիսկ մորեխներով:

6. Գրի՛ր՝ ի՞նչ նոր բան իմացար վագրերի մասին:

Որ նրանք 300 կգ են և որ նրանք կարող են երկար ժամանակ չուտել և սովը պահել:

7. Գրի՛ր կապույտ ներկված բառերի հականիշները:

Արագ – դանդաղ
Երկար – կարճ
Քիչ – շատ
Հիվանդ – առողջ

8. Դո՛ւրս գրիր երկու թիվ ցույց տվող բառ՝ թվական:
1_երեքհարյուր
2_հինգ

9. Ինչպիսի՞ն է վագրը: Գրի՛ր երկու բառ:
1_խորամանկ
2_աննկատ

10. Ընդգծի՛ր ճիշտ պատասխանը: «հրաշալի», «թույլ» բառերը ցույց են տալիս.

1. թիվ,
2. առարկա,
3. գործողություն,

4. հատկանիշ: